ՎԱՆՈՒՀԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գորիսի Ակ. Բակունցի անվան N 1 ավագ դպրոցի
պատմության և հասարակագիտության ուսուցչուհի
ՀՏԴ 37.016:94

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Բանալի բառեր և արտահայտություններ. քաղաքացիական արժեհամակարգ, հիմնախնդիր, հանրային քաղաքականություն, հանրային գիտակցություն, համայնք, կրթական համակարգ, արդի մեթոդներ:

Ключевые слова и выражения: гражданская система ценностей, проблема, общественная политика, общественное сознание, сообщество, система образования, современные методы.

Key words and expressions: civil value-system, problem, public policy, public consciousness, community, educational system, modern methods.

Օրավուր զարգացող աշխարհը մարտահրավերներ է նետում բոլոր երկրներին՝ զարգացե՛ք և հասե՛ք իմ ընթացքին:

Համաշխարհային բուռն զարգացումներին հակընթաց՝ մեր երկրում առկա են երևույթներ, որոնք ստեղծում են համայնքային հիմնախնդիրների սարդոստայններ: Այդ հիմնախնդիրների լուծման ճանապարհին արժևորվում է քաղաքացիական արժեհամակարգի ձևավորումը, քաղաքացիական ինքնագիտակցության դաստիարակումը, քաղաքացիական աջակցության կարևորությունը: Համայնքային բազում ու խորքային ուսումնասիրություն պահանջող հիմնախնդիրների վեր հանման ու ժամանակակից հարահոսի մեջ դրանց անհարիր գոյությունը, դրանք զգույշ ու պատշաճ կերպով հաղթահարելը, ժամանակավրեպ լինելու խարանից ազատվելը կրթական համակարգի բաղկացուցիչ մասն է: Նշանավոր փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին այն համոզմունքն է հայտնել, որ «կրթությունը հասարակական առաջընթացի և բարեփոխումների հիմնարար մեթոդն է, կրթության միջոցով հասարակությունը կարող է ձևակերպել իր սեփական նպատակները, կարող է կազմակերպել իր սեփական միջոցներն ու ռեսուրսները՝ դրանով իսկ որոշակիորեն և արդյունավետ կերպով ձևավորելով ինքնիրեն այնպես,

ինչպիսին ցանկանում է լինել ապագայում»[1]:Ուստի դպրոցն է իր ուսերին վերցրել պետական մտածողություն ունեցող, ազատամիտ, հանրային բարօրության համար պատրաստակամ, քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ապագա մարտահրավերներին դիմակայելու պատրաստ սերունդ կրթելու և դաստիարակելու դժվարին առաքելությունը, չէ որ «դպրոցի դերն է երեխան մարդ դարձնել. այսինքն կազմել անոր նկարագիրը»[2]: Դա կարևոր է, քանի որ համայնքի բնականոն կյանքն աղճատող ու համաշխարհային շրջապտույտի թափից հետ մնացող հասարակության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների լուծումը պահանջում է քաղաքացիական մոտեցում, քաղաքացիական անհանդուրժողականություն, սրտացավություն և շահագրգռվածություն:

Համայնքային հիմնախնդիրների վերհանումը հանրակրթական դպրոցի ընդհանուր դասընթացում մեր օրերում շատ արդիական է: Մեզ շրջապատող բնական միջավայրը, հասարակական տարաբնույթ հարաբերությունները, սոցիալական, մարդկային, քաղաքացիական նշանակություն ունեցող մի շարք գործոններ իրենց անմիջական ազդեցությունն ու հետևանքներն են ունենում դպրոցականի աշխարհայացքի, բարոյահոգեբանական նկարագրի, երևույթները ճիշտ ու համակողմանի ընկալելու և մեկնաբանելու կարողությունները զարգացնելու, ինքնուրույն անհատականության և հասարակության լիարժեք անդամի ձևավորման գործընթացի վրա:

Առկա խնդիրները որքան էլ տարբեր, այնուամենայնիվ, ներքին աղերսով կապված են միմյանց և ներկայացնում են կյանքի տարբեր բնագավառներ: Յուրաքանչյուր բնագավառ մի առանձին առարկայի ուսումնասիրության նյութ է դպրոցում: Ապագա արժանապատիվ քաղաքացու, քաղաքացիական հասարակության արժեհամակարգի ձևավորման վրա հատկապես մեծ ազդեցություն ունեն հասարակագիտական բնույթի առարկաները, որոնք հայրենիքի, հայրենաճանաչողության, համայնքի, համայնքային հիմնախնդիրների նկատմամբ անտարբեր չլինելու, մշակութային ժառանգության պահպանման տեսանկյունից խիստ այժմեական են և, ինչու չէ, ունեն ռազմավարական նշանակություն:

Հարկ ենք համարում նշել, որ հասարակության լիարժեք և մասնակցային, սեփական որոշումների և գործողությունների համար

[1] Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2003, էջ 74:
[2] Հայ վարժարան, թիվ 1, Գահիրէ, 1926, էջ 24:

պատասխանատու անհատի ձևավորումը հնարավոր կլինի ոչ միայն տեսական գիտելիքներ հաղորդելու, այլև ժամանակակից կյանքի պահանջներին համապատասխան այնպիսի հմտությունների զարգացման միջոցով, որոնք կնպաստեն դրանք գործնականում նպատակային կիրառելու համար: Նշված խնդիրը հաջողությամբ լուծելու համար մեծապես օգնում են ուսուցման արդի մեթոդները, որոնք «սովորողների գիտական աշխարհայացքը ձևավորելու, նրանց ընդունակություններն ու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու եղանակ են»[3]: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն պետք է լինի զգույշ, չափավոր: Այդ առումով Էդիլյանը նշել է՝ «Նա պետք է ընտրի դասավանդելիք նյութը, ուսումնասիրի առանձնահատկությունները և տեսնի, թե այդ նյութը դասավանդման նպատակներից որի համար ամենից հարմարն է, բայց գործնականին անցնելուց առաջ պետք է քննի նաև այն հարցը, թե այդ բոլորը որքան հարմար են այն դասարանի աշակերտներին, որոնց համար որոշված է մշակել այդ նյութը: Ահա այս հարցերը որոշելուց հետո ընտրում է համապատասխան մեթոդը և գործի անցնում»[4]:

«Ես եմ իմ երկրի տերը». ահա այն կարգախոսը, որը քաղաքացուն հայրենատեր և համայնքատեր է դարձնում, համայնքի անդամին սթափ ու մտահոգ է դարձնում:

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը և կարևորությունը՝ ներկայացնենք համայնքային հիմնախնդիրների ուսուցման դասի օրինակ: Թեման ընդգրկված է հասարակագիտություն առարկայի ութերորդ դասարանի դասընթացում:

Դասի նպատակն է՝

- սովորողներին հաղորդել պատշաճ մակարդակի գիտելիքներ,
- նպաստել հետազոտական հմտությունների ու կարողությունների զարգացմանը,
- զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները,
- խթանել երևակայության, նորովի մտածելակերպի, վերլուծելու ու մեկնաբանելու, տեղեկությունները համադրելու կարողությունների ձևավորմանը,
- նպաստել սեփական իրավունքների, պարտականությունների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության գիտակցմանը,

---

[3] Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 157:
[4] Շավարշյան Ա., Հայ մանկավարժներ, գ. 2, Երևան, 1961, էջ 627:

• զարգացնել բանավոր և գրավոր հաղորդակցվելու, հանրությանը դիմելու և ներկայանալու, լսելու կարողությունները,

• օգնել դրսևորելու վճռականություն, համառություն, գործողությունները ծրագրելու կարողություն, կազմակերպվածություն, նախաձեռնողականություն,

• ձևավորել թիմային և համատեղ աշխատելու, համագործակցելու կարողություն,

• դաստիարակել պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, մարդասիրություն և հայրենասիրություն:

Դասն անց է կացվում համակարգչային դասարանում:

Դասի առաջին փուլը խթանումն է: Գրատախտակին գրել դասի վերնագիրը, հենակետային հասկացությունը՝«Համայնքային հիմնախնդիրներ»՝ մտագրոհ մեթոդի օգնությամբ հնարավորություն տալով սովորողներին վեր հանելու սեփական պատկերացումներն ու գիտելիքները: Կատարել արտահայտված մտքերի խմբավորում՝ կապ ստեղծելով դասավանդվելիք նյութի հետ՝ խթանելով նրանց հետաքրքրությունն ու ուշադրությունը:

Իմաստի ընկալման փուլը սկսել համակցված դասախոսության միջոցով (սա նյութի հաղորդումն է տեսողական, լսողական նյութերի և նկարների ցուցադրումով), որի նպատակն է լիարժեք գիտելիքներ և տեղեկություններ փոխանցել վերոնշյալ հասկացության վերաբերյալ: Դասախոսության ներածականում ներկայացվում է թեմայի ուսուցման նպատակը, կարևորությունը և անհրաժեշտությունը:

Հիմնական մասում անդրադարձ է կատարվում հենակետային հասկացության հանգուցային կետերին.

• Ի՞նչ է համայնքը:

• Ի՞նչ է հիմնախնդիրը:

• Ի՞նչ է հանրային քաղաքականությունը:

• Ի՞նչ է հանրային գիտակցությունը:

Նշվածներից յուրաքանչյուրը հերթականությամբ քննարկվում է և ցուցադրվում սահկահանդեսի օգնությամբ: Սովորողների տրամաբանությունը, բազմակողմանի մտածելու կարողությունները խթանելու, ուշադրությունը և ներգրավվածությունը ապահովելու համար առաջ են քաշվում պրոբլեմային բնույթի հարցեր:

• Ի՞նչ բնույթի հիմնախնդիրներ գիտեք:

• Հասարակության ո՞ր շերտերի համար են դրանք հիմնախնդիր:

• Ի՞նչ դեր ունի հանրային քաղաքականությունը հիմնախնդրի լուծման գործում:

• Ի՞նչ դեր ունի համայնքի անդամը հիմնախնդրի լուծման հարցում:

Դասախոսության եզրափակիչ մասում սովորողների հետ միասին կատարել եզրահանգումներ, թվարկել իրենց համայնքում առկա հիմնախնդիրներ, ընտրել դրանցից մեկը:

Սովորողներին բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբի տալ առաջադրանք.

I խումբ- Ներկայացնել ընտրված հիմնախնդրի արդիականությունը:

II խումբ- Գտնել հիմնախնդրին վերաբերող օրենքը, որոշումները, հասկանալ իշխանության ո՞ր օղակն է պատասխանատու հիմնախնդրի լուծման համար:

III խումբ- Ներկայացնել հիմնախնդրի լուծման առաջարկներ:

IVխումբ-Ներկայացնել ակնկալվող արդյունքները:

Հատկացված ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կատարած աշխատանքը:

Կշռադատման փուլում ի մի բերել կատարված աշխատանքները, հստակեցնել դիրքորոշումները, կատարել եզրահանգումներ:

Գիտակցելով յուրաքանչյուրի՝ որպես համայնքի անդամի պատասխանատվության չափը և դերը համայնքային հիմնախնդիրների լուծման հարցում, աշխատանքը չի սահմանափակվում դասարանային մակարդակով, կրում է հետևողական և շարունակական բնույթ, ուստի հստակեցվում են հետագա անելիքները և սովորողներին հանձնարարվում է կատարել հետազոտական աշխատանք:

- Անցկացնել հարցազրույցներ և պարզել, թե որքանո՞վ է ընտրված հիմնախնդիրը կարևոր համայնքի տարբեր շերտերի համար:
- Ճշտել՝ առկա՞ է արդյոք որևէ նախագիծ կամ այլ գործող փաստաթուղթ, որը հաջողությամբ իրականացվում է այլ երկրներում:
- Պարզել՝ ի՞նչ քաղաքականություն է վարում պատասխանատու օղակը հիմնախնդրի լուծման ուղղությամբ:
- Իրականցնել քայլեր հիմնախնդիրը հանրայնացնելու համար և գտնել աջակիցներ:

Կարծում ենք, որ վերոնշյալ քայլերը կխթանեն աշակերտների, համայնքի մյուս անդամների և պատասխանատու օղակների միջև սերտ համագործակցությունը, ամուր և վստահելի գործընկերությունը, կնպաստեն պատասխանատվության այն մեծ գիտակցմանը, որ համամոլորակային հիմնախնդիրների լուծմանը, որոնք առնչվում են ներկա և ապագա սերունդների կենսական շահերին, կարելի է հասնել համայնքի, երկրի «փոքր» խնդիրների վերացման միջոցով:

Վ. Վ. Հայրապետյան

Համայնքային հիմնախնդիրների ուսումնասիրումը՝ որպես քաղաքացիական արժեհամակարգի ձևավորման միջոց

Ամփոփում

Հոդվածում ներկայացրել ենք, թե ինչպես կարելի է կրթության կազմակերպման արդիական մոտեցումներին համապատասխան աշակերտներին նախապատրաստել հասարակական կյանքին: Առանձնապես կենտրոնացել ենք համայնքային հիմնախնդիրները վերհանելու, աշակերտների կողմից դրանց լուծմանը հետամուտ լինելու և մասնակիցը դառնալու հարցերին:

Քանի որ դպրոցում է ձևավորվում աճող սերնդի միտքը, գաղափարը, հենց այստեղ պետք է բացահայտել այն պարզ ճշմարտությունը, որ որքան մեծ է քաղաքացու գիտակցումը, այնքան երաշխավորված է երկրի և իր ապագան:

В.В. Айрапетян

Изучение проблем сообщества-как средство формирования гражданских ценностностей

Резюме

В статье мы рассказали о том, как подготовить учащихся к общественной жизни в соответствии с современными организационными подходами образования. В частности, мы сосредоточились на вопросах выявлении проблем сообщества, претворении в жизнь решений учащихся и их становлении.

Поскольку мышление, идеи восходящего поколения формируется в школе, именно здесь нужно разоблачить простую истину, что чем больше осознание гражданина, тем более гарантированы его будущее и будущее его страны.

V.V. Hayrapetyan

The study of community issues as a means of forming a civil value-system

Summary

In this article I have introduced how to prepare pupils for social life according to modern approaches to organizing education. I have focused especially on raising community problems, ensuring that they be solved by pupils and participate in problem-solving processes.

As the future generation's horizon is formed at school, it is just here to discover the simple truth that the wider the citizen's consciousness is, the more guaranteed their and the country's future is.